վարձատրության գումարի բռնագանձման մասով գտնում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է դիտել 150.000 ՀՀ դրամը, որը նման պայմաններում ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի, իսկ դատական ծախսերի հարցը մնացած մասով պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Առողջապահության նախարարության «ՅՈԼՅԱՆ» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության՝ ՀՀ Առողջապահության նախարարության «ՅՈԼՅԱՆ» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի 21.10.2024 թվականին կայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ «ՅՈԼՅԱՆ» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի 21.10.2024 թվականին կայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումը:

2. ՀՀ ԱՆ «ՅՈԼՅԱՆ» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

2.1 ՀՀ ԱՆ «ՅՈԼՅԱՆ» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերության բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատվության գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am